



ԱՎԵՏԻՔ ԻՍԱԻԱԿՅԱՆ

Մոր սիրտը

(Հայկական ավանդավեպ)

Կա հինավուրց մի զրոյց,
Թե մի տղա,
Միամորիկ,
Սիրում էր մի աղջկա:
Աղջիկն ասավ «Բնձ քնավ
Դու չես սիրում,
Թե չէ գնա՞’,
Գնա՞’ մորը սի՞րտը բեր»:
Տղան մոլոր, գլխիկոր
Քայլ առավ,
Լացեց, լացեց,
Աղջկա մոտ ետ դառավ:
Երբ նա տեսավ, զայրացավ.
-Ե՛ չերևես
Շեմքիս, ասավ,
Մինչև սիրտը չըրերես:
Տղան գնաց և որսաց
Սարի այծյամ,
Սիրտը հանեց,
Բերեց տվեց աղջկան:
Երբ նա տեսավ, զայրացավ.

-Կորի՞ր աչքես,
Թե հարազատ
Մորլոդ սիրտը շբերես:
Տղան գնաց՝ մորն սպանեց,
Երբ վազ կըտար Սիրտը՝ ձեռքին,
Ոտքը սահեց, ընկավ վար:
Եվ սիրտը մոր ասավ տխուր,
Լացակումած.
Վայ, խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ շըցավա՞ց...

Մարտի 15, Ժնեվ